

ԱՐԺԱՆԱԽՈՐ ՄԵԾԱՐԱՆՔ՝ ԱՐԺԱՆԱԽՈՐԻՆ

Լիբանանահայ թատերաև ասարակության համար ծանօթ աճուն է բեմադրիչ Երուանո Ղազանճեանի աճունը անկասկած, ուրում բեմադրութեանը վերջերս Յակոբ Տէր Մեղրեան թատերաարտին մէջ կը ներկայացուի Արթուր Միլլըրի "Սալէմի Վեհիկները", յաղթական ու յաջող ելոյթներով:

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Հայ Երիտասարդաց Ընկերակցութեան "Վահրամ Փափազեան" թատերախումբը, ուրախութիւն է որ դարձեալ բարձրացած է թատերարեմ, խանդավառելու համար մեր փոքրիկ անուն: Իրերազարդող ու յարմար է ի վեր, հայրենի հոմոս վարպետ Երուանո Ղազանճեան կը բեմադրէ "Վ. Փափազեան" թատերախումբը մեծ սիրով, զայն սիրողական մակարդակէն բարձրացնելով արճեստավարժ մակարդակի, այսինքն՝ սիրողականէն... սիրողականի...:



Անշուշտ, այս բոլորը, շնորհիւ այն եզակի ուժին, որ իր ամբողջական ջանքով ու կամքով կանգուն ու յաղթական կը պահէ նուիրեալ արուեստագէտներու ամբողջ խումբը մը: Պատի՛ր մեծ ու փորձառու բեմադրիչ Ղազանճեանին եւ պատի՛ր անծանօթ զինուորներուն, այս վերելքին համար:

Ղազանճեան արուեստագէտ-բեմադրիչի արուեստը գնահատող Հ.Բ.Ը.Մ.-Հ.Ե.Ը.-ի Կեդրոնական Վարչութիւնը, արդարեւ արժեւորելու համար մեծ վարպետին ճիգն ու ջանքը, փափաքեցաւ մեծարել զինք մտերմիկ շունչով, Երկուշաբթի, 17 Մարտ 2008-ին, երեկոյեան ժամը 8:00-ին, Հ.Բ.Ը.Մ.-ի Ե. ու Ա. Տեմիրճեան Կեդրոնէն ներս, արուեստաւէր հոծ հասարակութեան մը ներկայութեան, անոր եօթանասուն ամեակին առիթով:

Հանդիսութեան ներկայ էին՝ Լիբանանի հայոց թեմի առաջնորդ՝ Գեորգ. Տ. Գեղամ Եպս. Խաչերեան, Հայաստանի Հանրապետութեան դեսպան տիար Վահրամ Տէր Դեմիրճեան, Հ.Բ.Ը.Մ.-ի ղեկավարներ, Հ.Ե.Ը.-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետն ու վարչակազմներ, քոյր միութիւններու պատասխանատուներ, հայկական վարժարաններու տնօրէններ, խմբագիրներ, միութեանակազմներ եւ արուեստը գնահատող բազմաազգեակ հայորդիք:

Երեկոյթը սկսաւ Հ.Ե. Ընկերակցութեան վարիչ տնօրէն պր. Գեորգ Սանթրոյեանի բացման խօսքով, ուր ան բարի գալուստի շնորհ խօսքեր ուղղեց ներկաներուն եւ փոխանցեց Կեդրոնական Վարչութեան ողջունի խօսքը:

Հունկ ապա, Հ.Բ.Ը.Մ.-ի "Սպիտակ" խումբի արուեստագէտներ՝ Օսան Պապահէքեան եւ Ռաֆֆի Տէր Առաքելեան ձեռնադաշնակի եւ օրկի վրայ հրամցցցին հայկական քաղցր մեղեդիներ՝ անթերի կատարողութեամբ:

Երաժշտական ունկնդրութեան յաջորդեց "Սպիտակ"-ի մեմորալ-չունիներէն Աննա Պաթուզեանի "Աշտարակ" եւ "Սալորոյ" երգերը, որ ձգեց հանգիլ տպաւորութիւն ներկայ հասարակութեան վրայ, գեղարուեստական բարձր ճաշակով:

Երաժշտական շատ հաճելի ու ակամջ շոյող մեղեդիներէն է ետք, հրաշիրեցաւ լիբանանահայ ծանօթ մտաւորական, մատենագէտ, Հ.Բ.Ը.Մ.-ի Դարմաթ-Յովակիմեան վարժարանի տնօրէն տիար Ժիրայր Դանիէլեանը, որպէսզի արտապայտի բեմադրիչ Երուանո Ղազանճեանի մասին:

Յարգելի բանախօսք, ամփոփ, բայց կոտ խօսքերով ամբողջական գնահատական տուաւ Ղազանճեան բեմադրիչին կենսագրութեան, անցած ուղիին, անոր վաստակաշատ ծառայութեան, արուեստի բնագաւառներէն ներս իր բերած շնորհաբեր նպաստին եւ անգուգական ու բարձր մակարդակի բժախնդիր արուեստին մասին, ամենայն բժախնդրութեամբ:

Շարունակուած Ա. Էջէն

Մեզմէ ամէն մէկը կրնայ օր մը Թովմասի նման փորձուիլ իր հաւատքին մէջ: Պատճառները շատ են՝ տարածուած ցաւը, չարիքը, անարդարութիւնը եւ մահի՛ մահանաղ էր անոնց զոհ կ'երթան անմեղներ եւ մանուկներ, մեր հաւատքը կը ցնցեն: Ընդդ այդ պարագաներուն է որ Թովմասի թերահաւատութիւնը մեզի օգնութեան կը հասնի, որովհետեւ մեզ կը ձերբազատէ ամէն տեսակ սխալ գաղափարներէն Աստուծոյ մասին, վերագտնելու համար մեր ըմբռնումին մէջ Քրիստոսին իսկական դէմքը, Ան որ մեր վերքերը եւ մեր մեղքերը իր վրան առաւ եւ կենցաղը զոհեց մեզի համար: Թովմասի սայթաքած հաւատքը վերանորոգեցաւ շնորհիւ Յիսուսի վերքերու շօշափումին: Յարուցեալ Քրիստոս կը շարունակէ ցոյց տալ մեզի այդ վերքերը պարտաւ մարդոց ցախն եւ տառապանքին ընդմէջէն՝ մեր հաւատքը հաստատ հիմի վրայ պահելու համար, պայմանաւ որ Յիսուսի շփման մէջ ըլլանք Թովմասի նման:

Սուրբ Պետրոս ուղղեց փրկութեան աւետիսը առաջին նորարարձ քրիստոնէաներուն սա խօսքերով. "Ի՞նչ բաճմուցեցաք անոր վերքերով" (Ա. Պետրոս 2, 24): Յիսուսի վերքերը, որ Թովմասին հաւատքը տան էր խախտելու, որովհետեւ ձախողանքի ճշանդներ էին, այս նոյն վերքերը դարձան թերահաւատ առաքելային համար՝ Քրիստոսի հանդիպումին շնորհիւ, անժխտելի սիրոյ փաստը:

Ժիրայր Դանիէլեան կարեորեց Հայաստան-Սփիոք փոխ յարաբերութեան մէջ վարպետին բերած օժանդակութիւնը եւ ծանրացաւ Երուանո Ղազանճեանի հայրենի թատերական կեանքի ոլորտներուն մէջ ունեցած բացառիկ կարեւորութեան եւ միջեւ օրս անոր բեմադրած բազմապիսի ներկայացումներուն եւ անոնց յաջող կատարեալ արդիւնքներուն մասին:



Ան, մեծապէս դրուատեց հայրենի արուեստագէտին տաղանդը, անոր եզակի ու բացառիկ ներկայութիւնը Հայաստանի արուեստի շրջանակներէն ներս, անեցնելով, թէ "Վ. Փափազեան" թատերախումբը բախտաւոր է որ ունի Երուանո Ղազանճեանի նման բեմադրիչ:

Պարոն Տէր Դեմիրճեանի պատմօտ խօսքին յաջորդեց Հ.Ե. Ընկերակցութեան Կեդրոնական Վարչութեան գնահատանքի խօսքը, զոր ըրաւ ատենապետ տիար Կարօ Ընդլլեանը, որ իր կարգին ներքոյեց արժանարար բեմադրիչին վաստակը, անոր ծառայութիւնը հայ թեմին եւ հայ արուեստին:

Պր. Կ. Ընդլլեան, արտապայտելով անոր արուեստի ուղիին, ըսաւ. - Մեր այսօրուայ յարգանքի երեկոն, համեստ տուրք մըն է: Տաւալուն վերջերս, Հայաստանի մէջ մեծ տարողութեամբ նշուեցաւ վարպետին եւ իր ազնիւ տիկնոջ յոբելեանները. սակայն մենք, մեր կարգին չէինք կրնար անտարբէր մնալ եւ լո՛ւտ անցնիլ տաղանդաւոր վարպետին 70-ամեակին կապակցութեամբ, որ կը կամրջէ Հայաստանն ու Սփիոքը, բժախնդրօրէն, հայօրէն:

Անակնկալ, առաւել ուրախութիւն առթող երեւոյթ հանդիսացաւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի "Օրհնութեան Գիրը", որ այս օր, մասնատրապէտ շնորհած էր մեծ բեմադրիչին, ուր կը գնահատուէր անոր տարիներու տքնաշան աշխատանքը, բեղմնաւոր ուղին եւ բերած աւանդը՝ հայ արուեստին՝ աներկբայօրէն:

Թեմի առաջնորդ, Գեորգ. Տ. Գեղամ Եպս. Խաչերեան, անձամբ ընթերցեց եւ յանձնեց "Օրհնութեան Գիրը", որոտընդուտ ծափերու մէջ:

Սրբազան հայրը կարեւորելով ձեռնարկին տարողութիւնը, անեցուց, թէ այսօր մէկ մեծարանքի տուրք չէ որ կու տանք, այլ՝ երկու: Եթէ առաջինը բեմադրիչ Երուանո Ղազանճեանի հանդէպ մատուցուող յարգանքն է, ապա երկրորդը՝ լիբանանահայութեան, որ գիտէ մնալ կանգուն, մնալ պատմելի վրայ, գոյատեւել եւ արտադրել, որուն կենդանի վկան է Հ.Ե.Ը.-ի "Վահրամ Փափազեան" թատերախումբը:

Հանդիսութեան վերջաւորութեան շնորհակալական խօսքով հանդէս եկաւ մեծարեալը, որ յուզումնախառն արտապայտութեամբ յայտնեց իր գոհունակութիւնը եւ երախտիքը ու խոստացաւ որ ինք պիտի ծառայէ հայ թեմին, թու կամ այլուր, միշտ մնալով հաւատարիմ՝ իր սկզբունքին... որովհետեւ, թատրոնը իր "Աշխարհ"-ն է:

Հանդիսութեան ասարտին, "Վահրամ Փափազեան" թատերախումբի երիտասարդ պարմանուհիներ ծաղկեփունջեր նուիրեցին մեծ վարպետին:

Հայաբոյր արուեստի երեկոն շարունակուեցաւ հիւրասիրութեամբ:

ՀԱՄԲԻԿ ՄԱՐՏԻՈՍԵԱՆ

ԻՏԱԼԻՈՅ ԱՌԱՋԻՆ ՅԻՆԳԵՐԸ... ԶԿՐՅԱՆ ՅԱՂԹԱՆԱԿ ՏԱՆԻԼ

Ֆուլթոլ

Իտալիոյ ֆուլթոլի պիտոյեանութեան 29-րդ հանգրուանի մրցումներուն ժիրէն ներս, արձանագրուեցաւ հազուադէպ պարագայ մը, երբ ընդհանուր դասաւորման աղիսակին առաջին հինգ դիրքերը գրաւող խումբերէն որեւէ մէկը... չկարողացաւ յաղթանակ տանիլ իր մրցակիցին դէմ, այս վերջին ըլլալ զօրաւոր թէ տկար, անկախ անոր գրաւած դիրքէն: Արդարեւ, երկու խումբեր՝ Ինթեր Միլան (առաջին) եւ Եուվեթոս (երրորդ) հաւասարութիւններ արձանագրեցին իրենց հիւրընկալներուն հետ, Միլն Ա. Ես. Ռոմա (երկրորդ), Ֆիորենթինա (չորրորդ) եւ Ա. Սէ. Միլան (հինգերորդ) պարտութիւններ կրեցին:

Ստորեւ կը ներկայացնենք առաջատար խումբերուն դասաւորումը.

	ՄՐՑ	ՎԵՏ	ԿՈՒԵՐ
1. Ինթեր Միլան	29	68	55-18
2. Ա. Ես. Ռոմա	29	61	52-28
3. Եուվեթոս	29	55	49-24
4. Ֆիորենթինա	29	50	43-29
5. Ա. Սէ. Միլան	29	46	43-25

ԱՆՂԻԱ

Անգլիոյ ֆուլթոլի պիտոյեանութեան 29-րդ հանգրուանէն յետաձգուած մրցումի մը ընթացքին, Մանչեսթըր Եուվեթոսը 2-0 արդիւնքով պարտութեան մատնեց իր հիւրը՝ Պոլթըն Ուոտերըզը: Երբ երեք կէտեր շահելով, Մանչեսթըր առանձնացաւ առաջին դիրքին վրայ, 3 կէտ անելի ունենալով իր անմիջական մրցակիցէն:

Իսկ Լոնտոնի մէջ, 27-րդ հանգրուանէն յետաձգուած մրցումի մը ընթացքին, Թոթէնհէմ եւ Չելսի 4-4 արդիւնքով հաւասարութիւն մը արձանագրեցին:

Այժմ դասաւորման առաջին մասը կը պարզէ հետեւեալ պատկերը.

	ՄՐՑ	ՎԵՏ	ԿՈՒԵՐ
1. Մանչեսթըր Եուվեթոս	30	70	61-15
2. Արսենալ	30	67	58-22
3. Չելսի	30	65	53-22
4. Լիվըրպոլ	30	59	55-21
5. Էվըրթըն	30	56	47-25

ՅԱՐՈՒԹԵԱՆ ՈՐԱՆՈՒԹԻՒՆԸ Շարունակուած Ա. Էջէն

Քրիստոնէական հաւատքի մեր յայտարարութեան մէջ կը կրկնենք «...Եւսել յերկինս նովին մարմնովն նստաւ ընդ աջմէ Ծոր. գալոց է նովին մարմնովն եւ փառօք Ծոր»: Նոյն Յիսուսին մասին է մեր հաւատքը: Ուրեմն անհրաժեշտ է որ գժնկիկ «տեսնենք» մահաւան վրայ տարած Իր յաղթանակով, Իր ներումով եւ Իր մեզի վստահած առաքելութիւնով:

Այսօր մեզմէ շատեր ձախողած եւ անվաւեր կը սեպեն Տէր Յիսուսի փրկութեան առաքելութիւնը: Այդ ձախողութեան պատճառ կամ հետեւեալը կը սեպենք աշխարհի եւ մեր անմիջական շրջապատին իրավիճակը: Ոմանք առաւելագոյնին մէջ՝ իտեալական, անհրկական եւ վիպական վարկած կը նկատեն մարդոց փրկութիւնը: Ուրեմն, կը փորձենք բարոյական բարձր անկարողները քիչ ինչ վար բերել եւ յարմարցնել մեր կացութեանը, կը փորձենք նայիլ թէ մեծամասնութիւնները ինչ կ'ընեն, կը փորձենք ընդօրինակել այն վիճակները՝ զորոնք մարդիկ մեզի կը ներկայացնեն որպէս ընկերային մեծ յաջողութիւններ. այդ բոլորին մէջ՝ ձախողութեան եւ վախի զգացումները կը կ'ընեն մեզ: Ոչ միայն մեզ մեզ ձախողած կը սեպենք, այլ մանաւանդ Տէր Յիսուս Քրիստոսը Իր առաքելութենէն վրիպած էր յայտարարեմք:

Հակառակութիւնները եւ հաւանքները կրնան տարբեր շատ ձեւեր առնել, սակայն մեր վիճակը տարբեր չէ Յիսուսի աշակերտներուն յուսալքուած վիճակէն: Սիս այս վիճակներուն մէջ Տէրը մեր մէջ կը «կենայ» դարձեալ եւ կ'ըսէ, «հաղաղութիւն ձեզի»: Տակաւին կը ներէ մեզի մեր անհասարարմութիւնները եւ ուրացումները. տակաւին կը վստահի մեզի Իր առաքելութիւնը, մարդոց տալու անոնց փրկութեան աւետիսը: Մինչ կը նայինք Յարուցեալ Փրկչին, թող մեր ուրախութիւնը ամբողջական ըլլայ, քանի որ Ան նոյն Տէրն է, որ մահուան եւ գերեզմանին յաղթեց:

Քրիստոս յարեալ ի մեռելոց, Օրհնեալ է յարութիւնը Քրիստոսի:

ԶԱՏԿՈՒԱՅ ՊԱՏԳԱՄ

Այն վերքերը, որ Քրիստոս կրեց մեզ սիրելուն պատճառաւ, այսօր մեզի կ'օգնեն համոզուելու թէ Աստուած անճոռնօրէն եւ առանց պայմանի մեզ կը գուրգուրայ: Մեր ցաւերուն եւ նեղութիւններուն մէջ, Յիսուսի վերքերը մեզի ոյժ պիտի տան աղաղակելու՝ "Տէ՛ր իմ եւ Աստուած իմ": Յիրափ, միմիայն պարպիսի Աստուած մը, որ մեզ պաշտպան կը սիրէ եւ մեր վերքերը մեր տեղը կը կրէ, արժան է մեր հաւատքին եւ մեր սիրոյն:

Աշխարհի վրայ որքան անարդարութիւններ եւ նեղութիւններ կան: Անպակաս են նաեւ բնական աղէտները եւ մարդկային ողբերգութիւնները, ուրոնք անհամար զոհեր կը խլեն եւ մեծ վնասներ կը հասցնեն: Յիշենք նաեւ Միջին Արեւելքի ամեօրեալ արհիւակի դէպքերը, առանց մոռնալու Հայաստանի մէջ տեղի ունեցած արտապայտութիւնները: Այս ցաւալի վիճակէն դուրս գալու միակ ելքն է՝ աղօթքը եւ յանձնառու աշխատանքը ի նպաստ ընդհանուր բարիքին: Ամէն տեղ կարիք կայ փոխարարձ հաշտութեան: Ամէն տեղ կարիք կայ խաղաղութեան վերահաստատումին: Յարուցեալ Քրիստոսի հաւատարմները կրնան անոնց նպաստել եւ զանոնք յաջողցնել:

Սիրելիներ, Քրիստոսի վերքերու միջոցաւ կըր-

երբ կ'երգենք. "Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ": Ան է մեր միակ յոյճ անելի խաղաղ ապագայի մը համար, ուրիշ տեղ կ'էտք չէ փնտռել: Մի՛նչ Թովմաս առաքելային հետ կը գոչենք՝ "Տէ՛ր իմ եւ Աստուած իմ", կը հնչէ մեր սրտին մէջ Յիսուսին սա միւս խօսքը. "Եթէ մէկը ուզէ ինձի ծառայել՝ իմ ետեւէս թող գայ, եւ ուր որ ես եմ՝ իմ ծառաս ալ հոն պիտի ըլլայ: Եթէ մէկը ինձի ծառայէ՝ Հայրս պիտի պատուէ զայն" (Յովհ. 12, 26): Պատրաստ ըլլա՛ք ուրեմն սիրելիներ, Յիսուսին հետեւիլ եւ մեր կեանքը ծառայութեան մէջ դնել մեր եղբայրներուն համար (տես Ա. Յովհ. 3, 16), որպէսզի դառնանք առաքելներ խաղաղութեան, բանբերներ ուրախութեան, որոնք ցաւերուն դիմաց չեն վարանիր, որպէսզի դառնանք պատգամաբերներ յոյսի, որ հիմնուած է Քրիստոսի Յարութեան ստոյգ յաղթանակին վրայ:

Թո՛ղ Սուրբ Կոյս Մարիամ, Յարուցեալ Քրիստոսին Մայրը եւ մեր երկնաւոր մայրը, մեզի պարգեւէ այս վսեմ շնորհքը, եւ խաղաղութիւն շնորհէ տառապեալ բոլոր մարդոց, յատկապէս Հայաստանի, Լիբանանի, Իրաքի եւ Սուրբ Երկրի ժողովուրդներուն, ինչպէս նաեւ մեր ընտանիքներուն, մեր ծերերուն, մեր հիւանդներուն, մեր երիտասարդներուն եւ ամէն բանէ առաջ՝ մեր սրտերուն: Ամէն: Քրիստոս յարեալ ի մեռելոց - Օրհնեալ է յարութիւն Քրիստոսի: